Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-960[12]-16.05.2016-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 1-ին մասը «հանձնաժողովի անդամի» բառերից հետո լրացնել ‹‹կամ ընտրական հանձնաժողովում տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետի›› բառերով:

Հոդված 2. Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասը «աշխատանքային կարգապահական ներքին կանոնները»› բառերից հետո լրացնել ‹‹,Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված սահմանափակումները›› բառերով:

Հոդված 3. Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասում ‹‹է նաև սույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանված պահանջները չպահպանելը:›› բառերը փոխարինել ‹‹են նաև օրենքի 24-րդ հոդվածով սահմանված պահանջները չպահպանելը և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված սահմանափակումները խախտելը:›› բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: